Աննա Սարգսյան

Փրկագին

Մեր հոգում, ահա, տաճարն է փլվում,
Այն, որի հոգսը վստահել էին մեզ,
Ու սթափվելուն քշերն են տրվում,
Կապող շղթան է նույնիսկ արձակվել:

Մնացել են լոկ սկիզբ ու վերջն ունայն,
Մոլագար միտքն է խիստ սանձարձակվել,
Ճնշում է արճիճ, արտաշնչում՝ քար,
Աղավնու վրա օձ է հարձակվել:

Մի դատիր, քանզի կյանքն ամեն պահին
Իր մամռակալած բռունցքն է բացում,
Ու հայելու արտացոլման մեջ
Տեսնում ես նրան, ում դու էիր ծաղրում...
Իբրև հաղթանակ՝ դևը հրճվելով
Կշշնջա քեզ, թե՝ ներում չկա,
Բայց հանկարծ ինքն էլ՝ շվար, երկնչած,
Կխաչակնքվի ու կգլորվի ցած:
Մի երդվիր, ու սին խոստումներ մի տուր,
Կյանքը քամի է, այլ ոչ զվարճանք,
Նա չի խնայում, տալիս է տանուլ
Այն, ինչ թվում է հավերժ ու անանց:
Նույնիսկ հրեշտակն իր լույս բարձունքից

Փորձ կանի դևին ներում շնորհել,
Իսկ անմեղ հոգուն՝ թողած մութ շեմին,
Կասի՝ ուժեղ ես, ճիգ արա կանգնել:
Ու կհեռանա՝ ետ չնայելով,
Ու կանհետանա մոխիրների մեջ,
Այն հրեղեն բոց-կրակների,
Որ անհավատներն էին դրախտում թողել:

1.11.2025թ.
Դիլիջան